

Որակավորման հավաստագրի տրամադրման կարգը
(Կանոնակարգ, հավելված 5)

1. Որակավորված ղեկավար պաշտոնների թեկնածուներին որակավորման հավաստագրերը տրվում են սույն կանոնակարգի 20-րդ կետի աղյուսակ 1-ի առաջին սյունակում նշված ղեկավար պաշտոնների համար:
2. Սույն կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված որակավորման հավաստագիրը տրվում է թղթային կամ էլեկտրոնային եղանակով՝ քննությունը հանձնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում: Թղթային եղանակաով որակավորման հավաստագիրը տրամադրվում է որակավորված անձին՝ անձը հաստատող փաստաթղթի ներկայացման դեպքում, իսկ էլեկտրոնային եղանակով որակավորման հավաստագիրը ուղարկվում է թեկնածուի հերթագրման տեղեկություններում նշած էլեկտրոնային փոստին:
3. Թղթային եղանակով տրամադրված որակավորման հավաստագրի կորստի (ոչնչացման, ոչ պիտանի դառնալու) դեպքում անձը կարող է այդ մասին հայտնել Միություն՝ ներկայացնելով գրավոր դիմում որակավորման հավաստագրի կրկնօրինակը ստանալու վերաբերյալ: Դիմումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Միության կողմից որակավորման հավաստագիրը թղթային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ հավաստագրի վերին ձախ անկյունում «Կրկնօրինակ» նշումով:
4. Որակավորման հավաստագիրը սույն կանոնակարգի 29-րդ կետով սահմանված ժամկետում էլեկտրոնային փոստին չստանալու դեպքում անձը կարող է դիմել Միություն՝ ներկայացնելով գրավոր դիմում՝ նշելով այն էլեկտրոնային փոստի հասցեն, որով անձը ցանկանում է ստանալ որակավորման հավաստագիրը: Դիմումն ստանալուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Միության կողմից որակավորման հավաստագիրը էլեկտրոնային տարբերակով կրկին տրամադրվում է որակավորված անձին՝ ուղարկելով դիմումում նշված էլեկտրոնային փոստի հասցեին:
5. Միության կողմից վարվում է տրված որակավորման հավաստագրերի հաշվառման գրանցամատյան, որտեղ նշվում են որակավորված անձի անուն ազգանունը, անձնագրի տվյալները, հանրային ծառայությունների համարանիշը (սոցիալական ապահովության քարտի համարը) կամ հանրային ծառայության համարանիշ չստանալու վերաբերյալ տեղեկանքի համարը, որակավորման տեսակը, հավաստագրի համարը և տրման օրը, ամիսը, տարին: Որակավորման հավաստագրերի հաշվառումը տարվում է հավաստագրերի տրամադրման օրը:
6. Որակավորված անձանց վերաբերյալ տեղեկատվությունը (քաղվածք գրանցամատյանից) հրապարակվում է Միության ինտերնետային կայքում՝ «Որակավորման հավաստագիր ունեցող անձինք» ցուցակում՝ քննությունը հանձնելու օրվանից հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում:
7. Թեկնածուներին որակավորման հավաստագրերը տրվում են դրանց ստորագրման պահից հաշված երեք տարի ժամկետով: